



ՀԱՄԲԱԼԻԵՐ ՌԹԵԱԲՈՅ Լրագիրը հրատարակուում է իւրաքանչիւր ամսի 10 րն և 20 րն. տարեկան գինը ռուբլւոյ 5 հատ 'ի միասին է 5 ռուբլ. արծաթ. իսկ կես տարուանը 3 ռուբլ. արծ. կանխիկ վճարելի:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20

Հ. 6

1861 ՄԺԻ

ԳՐԻԳՐ ՏԷՐ ՄԿՐՏՁԵԱՆ ՄԱԼԵՆՅԱՆՑ

Արդեօք Աստուածային նախասահմանութենէն է, թէ աշխարհիս ողին միշտ այսպէս յաջողութեամբ կ'ստի մարդկային ազգի բարեբարաց ազգաշէն և քրիստոնէական գործքերի վերայ, որք մինչդեռ իւրեանց քրիստոնէական և Աստուածահաճոյ գործքերով երկնքի մէջը իւրեանց հոգւոյն յաւիտենական պաշար գանձած ժամանակին, իւրեանց հոգւոյ փրկութեանը համար ևս աշխարհիս վերայ մշտնջենապէս յիշատակ ձգելու բարձանքով՝ Աստուծոյ բնակարան՝ տաճար կը կառուցանեն, այսպիսի առաքելական գործոց սկիզբը աւրած կատարմանը չհասած՝ անագորոյն մահը այն բարեբարաց սրտի սիրովը հիմնած ու հաւատոյ յուսովը կանգնացըւած բարեգործութենէն կրաժանէ և յաւիտենականութեան աշխարհի մէջ գանձած գանձին վայելմանը կտանի: Ինչ կ'զայ թէ Աստուծոյ նախաստեղծութիւնն է սրանք կոչողը մահուան հրամանով. որ մարդիկ իւրեանց յաւիտենական կենաց վերայ ունեցած սէրը՝ անցաւոր աշխարհիս մէջ իւրեանց ձեռագործի վերայ զբաղելով չի սպառն, ու իւրեանց անմահութեան հոգւոյ յոյսը՝ իւրեանց կենաց ասպարիզին մէջը թողած անմահ կարծեցեալ յիշատակների վերայ չընեն, որ ժամանակի ժանիքների մէջ ազամանդեայ քարից ևս որ լինի, պիտի հոսին և փոշու հետ յողը ցնդին:

Այսպէս եղաւ մեծին Սմբատայ Բագրատունեանց Հայոց թագաւորի կենաց ընթացքը, որ Անի մայրաքաղաքի Աթուղիկէ եկեղեցին հիմնարկեց, ու կատարուումը չտեսած՝ զրնաց, որ յետոյ իւր թագուհին աւարտեց: Հաղար տարին յետոյ նոյն եկեղեցւոյ նմանը շինել սկսան Օսմանցու Հայ գաղթականքը 'ի Ալմրին Ե իրակայ. առաքելի բարեգործին մէկը տասն հաղար մանէթ յոժարակամ նուիրեց, և եկեղեցւոյ հիմնարկութեանը եղաւ հոգաբարձու. բայց դեռ գեաւի հետ հաւասար չբարձրացած՝ թողուց ու գնաց, անշուշտ զհետ կոչողին:

Այսպիսի առաքելական Աստուածահաճոյ ազգոգուտ գործսկսեց և ազնիւ Գրիգոր Տէր Մկրտչեան Մալնեցեանց, Աղարշապատու աստիճանաւոր իշխանը, և իւր ազգասի-

րական գործքերի կատարումը՝ գնաց երկնքը տեսնելու. կրնքելով իւր կեանքը յիսուն երկու տարուան հասակի մէջ, որու համառօտ կենսադրութիւնը կանենք:

Գրիգոր Տէր Մկրտչեան Մալնեցեանց, որու ազգականները կան և հիմա և կոչուին Մալնեց, ծնաւ 'ի Թիֆլիզ 1809 թուականին, այն ղիշեր, յորում Եփրեմ Աթուղիկոսը մտաւ անդ, և կգար յԱջմիածին ձեռնադրուելու: Սորա ծնողքը որ բուն Աղարշապատցի էին, մի տարի յառաջ Գուղովիչ Առաքելի Երեան գալովը, Աղարշապատայ ժողովուրդի հետ գաղթած էին Թիֆլիզ:

Եփրեմ Աթուղիկոսի ձեռնադրութենէն յետոյ, երբ որ նոյն ղիւղի ժողովուրդը կվերադառնար, Տէր Մկրտչը այն տեղ վախճանած լինելով, Գրիգոր որբացած՝ իւր մօրը հետ կվերադառնայ Աղարշապատ. և ըստ որում որդի քահանայի էր՝ ինքը Առաքելի օրինաց կարգով՝ իւր անձը նուիրեց 'ի սպասաւորութիւն Աղարշապատու եկեղեցւոյն. և ըստ որում շատ համեղ ևս ձայն ունէր, կրթուեցաւ նա և եկեղեցական դպրի: Այս դպրութեամբ 'ի տանն Աստուծոյ՝ իւր աղքատ մայրն կենամէր և իւր ձեռագործ արհեստով կկառավարուէին երկուքը, ըստ որում ոչ քոյր և ոչ եղբայր ունէր:

1821 թուին, երբ որ ևս կարգաւոր գնացի Աղարշապատցի Տէր Աղար քահանայի մօտ՝ որ այրիացած՝ եկեղեցւոյ սենեակը կբնակէր, և զրեթէ գիւղի բոլոր երեխայքը նորա մօտ էին, տիրացու Գրիգորը բոլոր աշակերտաց Խաչատուրի կանէր, և նորա երաժշտական քաղցր ձայնովը կը պայծառանայր մեր գիւղի եկեղեցին ու կմխիթարուէին ժողովուրդք, այնպէս՝ որ շատ անգամ մեծի Ուրբաթու օրը կտակ կարգաւոր համար՝ Երեանցիք կյափշտակէին զտիրացու Գրիգորը իւր քանի մի ձայնաւոր դպրիներով:

1827 թուին, 'ի պատերազմէն մէկ կամ երկու տարի յառաջ էր՝ որ Տէր Աղարի քովէն ելաւ տիրացու Գրիգոր, և զրեթէ տախտակաւ եղաւ Տէր Աղարի գիւղական զբարոցը. աշակերտաց երկու բաժինը իւրեանց խալիֆայի հետ գնացին, առաւելապէս այն թաղը տղայք, որք զրացի և մերձաւոր էին տիրացու Գրիգորի տանը. և ահա նորա փոքրիկ տունը դարձաւ փոքր միջոցի մէջ՝ Աղարշապատայ երկ-

լորդ վարժարանը. և այնուհետև բաժանման հետ նախանձա-
ւորութիւն ևս ընկաւ աշակերտաց մէջ՝ մէկ մէկէ յառաջ
վարելու յեկեղեցական դպրութեան մէջ, թէև Տէր Ղազարը
իւր աշակերտներէն յարոյց ուրիշ խալիֆաներ, բայց և ոչ
մէկը Ղազարեան օրէնքով Աստուծոյ տաճարի մէջ սպասա-
ւորութիւն անողն անողն բռնեց:

Այնպէս պատերազմը և Ղազարապատայ երկու թաղա-
կան վարժարանները այսպէս շարունակուեցան. թէ որ ուրիշ
յիշատակ չլինի անմահացնելու աշխարհիս վերայ Յովհաննէս
Արքեպիս Կաթողիկոսի անունը, Ղազարապատայ նորա-
հիմն վարժարանը յիշատակ յաւիտենից բաւական է նորան:
Արքեպիս հայրապետի հրամանաւ շինուեց Ղազարապատայ
վարժարանը 1830 թուականին: 1831 թ. համբաւաւոր Մես-
րովք վարժապետ Թադևոսեանց, որ Հնդկաստանէն բերուած
էր սուրբ Եթովպոյ աշակերտացը վարժապետելու, զիւղի
վարժարանի մէջն կարողեցաւ վարժապետ քերականու-
թեան: Տիրացու Գրիգորը ազատական արհեստի բարոյա-
կան օգուտը վեր համարելով քան իւր մարմնական օգուտը,
որ չոր ու ցամաք ընթերցումն ուսուցանելով տղայոց՝ իւր
ապրուստը կճարէր՝ ձգեց իւր վարժարանը և աշակերտովքն
մտաւ նորաբաց վարժարանը ու կարաւ անդ խալիֆայու-
թեան պաշտօն: Այս երկու թաղական դպրոցներէց կայա-
ցաւ Ղազարապատու Մեսրովքեան վարժարանը. և տիրա-
ցու Գրիգորը իւր քսանամեայ հասակին մէջ՝ սկսաւ քերա-
կանութիւն:

Այս ժամանակէս յետոյ, այն է 1834 թ., երբ որ Մես-
րովք ճանապարհորդեց ի Կոստանդնուպօլիս, և որք ձգեց Ս.
Իշմիլաճի և Ղազարապատայ վարժարանի մէջ քերական-
ութեան ճաշակն առած իւր սիրելի աշակերտները՝ զիւղի
վարժարանը ևս ցրուեցաւ, և տիրացու Գրիգորի պաշտօ-
նական ծառայութիւնները այնուհետև սկսան՝ յօրէ բացման
Անիոյի սրբոյ Իշմիլաճի յօգուտ Եթովպոյ, յօգուտ Ղա-
զարապատոց, ի պայծառութիւն իւր անուանը և ի յա-
ռաջադիմութիւն իւր անձին, որովհետև այս եկեղեցականի
արդէն առաջին ամուսինը առ Աստուած փոխուելով, հոգեւոր
աստուծոյն մէջ նորա ընթացքը վաւերաց, աշխարհական փա-
ռայ աստուծոյն բանալու այս կենցաղոյս մէջ:

ԱՔԷԼ ԱՐԷԿԵԼԻԱՆ:

(Մնացեալը միւս համարի մէջ)

ՂԱՌ

Ապրիլի 1-ին հանդիսէ Բոյնի Ապրիլի Ուսումնարանի Օրէնքոց ի նոր
հանգիստէ և Բաղրատիւնի Կարապետի Մարգարէան Հայրապետեան,
Յ. Սեպուհեան 1861 թ.:

ԿԵՐԱՊԵՏԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Որոշում և երկրամբ են, յորմէ հետեւ նախնիք մեր՝ հզօր ձե-
ռամբ մեծի Եկատրինայ երկրորդի Կայսերու հայն ամենայն Ռուսաց
ազատեալք ի դարաւոր բռնակալութեանց Թաթարացն Ղրիմու
և ընկալեալք ի ծոց մարդասէրն Ռուսիոյ՝ կառուցին զբաղաւրս զայս
ի յիշատակ հայն նախնիքանի, որ ի Հայաստան Ութուսն և երեք

ամբ են, յորմէ հետեւ հարք մեր, և մեր որդիքս նոցա, հոխանաւո-
րեալք ընդ հայրական թեաքութեամբ ամենողորմած Կայսերացն
Ռուսիոյ՝ վայելեմք զհանգիստ և խաղաղ կեանս, արժանի գտեալ
մեծամեծ արտօնութեանց և ազատութեանց, մինչև անգամ նախան-
ձելի հանդիսանալ մեր յաւս համադրի եղբարց մերոց սփռելոց ընդ ա-
մենայն աշխարհ զինի անկման Հայկազեան Թագաւորութեան: Ար-
դարեւ՝ զինչ չունիմք մեր. — զհայկապ և զփառաւոր զեկեղեցիս.
արդեօք զեկեղեցական զերկիրս և զկալուածս. զզեկեղեցիաշէն ուսում
նարանս արդեօք: Եւ որ մեծ է քան զամենայն, ունիմք զմեր ազգա-
յին իրաւարան, և զմեր հայրենի օրէնս: Եւ զինչ մեծ քան զայդ
կարէ լինել ողորմութիւն և շնորհ, զինչ մեծ քան զայդ երջան-
կութիւն նախանձելի վասն մեր ի վերայ աշխարհի: Մինչև ցարդ
պակաս էր առ մեզ միայն ազգային ուսումնարան օրիորդաց. և զայն
ահա ըստ բարձր բարեհաճութեան Ամենողորմած ԿԱՅՍԵՐԻՆ մերոյ
ԱՂԱՔՍԵՆԻՐԻ Բ. թողարեալ լինի մեզ այսօր բանալ հանդիսա-
պէս: Այդ է հաճ ուրախարար պատճառն հանդիսիս, որ այժմ գու-
մարեալ ունի զմեզ աստանոր ի մի սիրտ և ի մի հոգի՝ առ ի լինել
վկայ ազգայն երջանկութեան զաւակաց մերոց:

Ապաքէն՝ Գերապատիւ Տեառք, աւելորդ իմն է ապացուցանել աս-
տանոր թէ որքան մեծ է պիտանաւորութիւնն Ռուսիայի օրի-
որդաց ի մերումն դարու, որքան մեծ օգուտն այնորիկ վասն զաւակաց
մերոց, և քանի ազնիւ և բարի նպատակն այնորիկ: Քանզի անցին
զնացին ժամանակքն այնքիկ՝ երբ մարդիկ հայէին ի վերայ կանանց
իրեւ ի վերայ ծառայից: Այժմ ի մերումն մարդասէր դարու լու-
սաւորեալ աշխարհս հայի ի վերայ կանանց իրեւ ի վերայ մարդկան,
ընդունի և խոստովանի այժմ զայն ազնիւ և մեծախորհուրդ պաշտօնն,
որ յանձնեալ է Ռուսիոյ ազգի կանանց ի կատարել, այսինքն լի-
նել նոցա ոչ միայն սոսկ անուցիւ զաւակաց իւրեանց՝ որ բնական է և
անբան կենդանեաց անգամ, այլ և լինել նոցա ընդ նմին Ռուսիոյ և
Գաստիարակի նոցա ի մասնաւոր ուսմունս, ի բարի վարս և ի քաղա-
քավարութիւն մինչ ցմանեկն ի դպրոց հասարակաց: Ուրեմն իւր և
զինոր մարմ է նոցա կատարել զայդ վսեմական պաշտօնը, և թէ ոչ
բարի կրթութեամբ և վարժութեամբ: Քանզի կրթութիւնն ոչ մի-
այն ճոխացուցանէ զմիտս մարդկան ազգի ազգի օգտակար գիտու-
թեամբ, ոչ միայն ազնուացուցանէ զբարս և զվարս մարդկան, այլ
և ուսուցանէ նոցա սիրել զընկերն իւր իրեւ զանձն իւր՝ որ է առաջին
պատուիրան Փրկչին աշխարհի, լինել հաւատարիմ պաշտօնեայ Թա-
գաւորին իւրոյ և հնազանդ օրինաց Նորա, սիրել և պատուել հա-
նապաղ զազգ իւր և զեկեղեցի՝ յորում ծնեալ է, և ձեռն օգնականու-
թեան մատուցանել կարօտեալ աղքատին առանց ամենեկն տրտն-
ջանաց:

Այժմ ոչ ի զուր ասաց՝ որ ասացն իւր երկու հազար ամբ յառաջ
քան զայս՝ թէ «Պատուական է իմաստութիւն քան զականս պատ-
ուականս և քան զգանձս բազումն»:

Թող ուրեմն այսուհետև դատերք մեր չպարծին միայն արտաքին
փառաւոր և շքեղ զգեստութեամբ և ականակուռ զարդոյ իւրեանց, որք
չտան ամենեկն առանձին իմն նշանակութիւն մարդկային կոչման և
արժանաւորութեան՝ և թէ զուրկ են նոքա յիմաստից գիտութեան,
այլ թող պարծի այսուհետև իւրաքանչիւր որ ի նոցանէ անձնական
արժանաւորութեամբ իւրով գիտութեամբ ազգի ազգի օգտակար ուս-
մանց, պարկեշտութեամբ և համեստութեամբ, որ բնական յատկու-
թիւն են հայազգի կանանց, ազգասիրութեամբ և բարեգործութեամբ,
և յայնժամ միայն կոչեցցին նոքա տիրապէս՝ բարի մայր, առաքինի
և ժողովուրս կին, և որժանաւոր դաստիարակ զաւակաց իւրեանց:

Եւ եթէ այդքան մեծաբան բարեաց պատճառ ունի լինել Ռուսիոյ
նարանդ օրիորդաց, զն ուրեմն մատուցուք զմեր ամենազերմուանդն
զօհոթութիւն սրտից ամենաբարձրելոյն Աստուծոյ, որ զիտէ և տնօրինէ
զպետս և զկարիս մեր քան զոր խնդրեմքս և իմանալքս, մատուցուք
նաւ զմեր ամենախորին շնորհակալութիւն ՕԳՈՍՏԵՓԱՆ ԿԱՅՍԵՐԻՆ

Печатать позволяется, С.-Петербургъ. 15-го Октября 1861 г. Исправ. долж. Цензора *С. Забиетинъ*. Цензоръ *В. Бекетовъ*,
Типографія Лазаревского Института.